

Ամբաս Բիւրաս

Խմբագրութիւն «Փիւնիկ», Ի Ալեքսանդրիա



S. Burat  
Rédaction «PUNIG»,  
Alexandrie

ԵԳԻՊՏՈՍ

Նոթ.  
ՏԱՐԵԿԱՆ... 45  
ՎԵՏԱՄՍԵԱՅ 25

ԲԱԺՆԵԳԻՆԸ  
ԿԱՆԽԻԿ Է

ԱՐՏԱՍԱԶՍԱՆ

Յո.  
ՏԱՐԵԿԱՆ... 15  
ՎԵՏԱՄՍԵԱՅ 8

ԿՈՎԿԱՍ  
ՏԱՐԵԿԱՆ ԲՊԼ. 6

# Փ Ի Ւ Ն Ի Կ

Շ Ա Բ Ա Ք Ա Ք Ե Բ Բ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Բ. ՏԱՐԻ

ՉՈՐԵՔՇԱՔԹԻ 14 ՄԱՅԻՍ 1902

ԹԻԻ 50

## ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Ահա՛ ԵՐԿՈՒ ԹԻԻ մնաց  
Փիւնիկի Բ. Տարեշրջանը լրա-  
նալու. կը ինդրենք որ Պատ.  
բաժանորդները փութացնեն ի-  
րենց վճարումները:

## ԽՆԱՄԱԿԱՂՈՒԹԻՒՆ

ԿԱՄ

## ԿԱՄԱՅԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Մամուլը պարտքը կատարեց, պաշտ-  
պանելով արդար ու ճշմարիտ դատ մը, ինչ-  
պէս է ՍՍՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՀՈՍ ԱԼ ԳՈՐ-  
ԾԱԴՐՈՒԹԻՒՆԸ: Մամուլին հետ Աղեքսան-  
դրիոյ գրեթէ բոլոր հասարակութիւնը ցըն-  
ծութեամբ ողջունեց Մարտ 23ի Կիրակին:  
Բայց այդ հասարակութիւնը դատապար-  
տուած է այսօր կրելու հետեւանքը նոյն  
Կերակի օրուան խանդավառ կեցցէներուն:  
Վսեմ. Պողոս Բաշան, ա՛յնքան դիւրագնի  
ստացուած ժողովրդականութենէն զիսով-  
ցած, ընտրութիւնները վաւերացնել աւրէ

յետոյ Տիար Հայկ Էփրդերը զրկել փորձեց  
Թաղ. Խորհուրդին անդամակցութենէն:

Մենք չենք ուզեր մանրամասնու-  
թիւնները նկարագրել այն տխուր դար-  
ձուածներուն ու դերերուն, որոնք խաղա-  
ցուեցան վերջերս:

Կը նշանակենք միայն երկու կարեւոր  
գրութիւններ, որոնք ինքնին բաւական են  
լուսաւորելու հասարակութիւնը:

Այդ գրութիւններէն մէկը զրկուած  
է Գեր. Ս. Առաջնորդէն նոր կարգուած  
խնամակալի մը, միւսն ալ ԲՈՂՈՒԲԱԿԻՐ  
մ'է ոչ-հրաժարեալ երկու անդամներուն  
կողմէն:

## ՊԱՏՃԷՆ ՊԱՇՏՈՆԱԴՐԻՆ

Առաջնորդարան Հայոց Աղեքսանդրիոյ

Աղեք. 12 Մայիս 1902

Վսեմ . . .

ԱՍՏ

Ներկայ տարւոյ 23 Մարտի ընտ-  
րութեամբ կազմուած Թաղ. Խորհուր-  
դը, ամսոյս ծին հիմնապէս լուծուած  
լինելով, ըստ հրահանգի Ազգ. Կեդ-  
րոնական Վարչութեան, հարկ տես-  
նուած է խնամակալութիւն մը կազ-

մել, որով կարելի լինի ժողովրդեան մէջ տիրող երկպառակութիւնները արմատապէս բառնալ և վերահաստատել խաղաղութիւնը:

Սոյն տեսութեամբ Ձեր Վսեմութիւնը յարմարագոյն անձնաւորութիւններէն մին նկատուելով, զՁեզ սոյն Խնամակալութեան անգամ նշանակած եմ, և ընդ Ձեզ հետեւեալ պատուարժան ազգայինք.

- Վսեմ. Պօլոս Բաշա Նուպար
- » Աբրահամ Պէյ Բարթող
- » Միքայէլ Պէյ Բէյիզեան
- Ազն. Գրիգոր էֆ. Մելքոնեան
- » Չարեհ » Սվազլը
- » Գառնիկ » Չպուգճեան
- » Ալեքսան » Ճէվահիրճեան

Վստահ եմ որ Ձեր Վսեմութիւնը պիտի բարեհաճի ստանձնել սոյն անձնուէր պաշտօնը, և իւր ծանօթ ազգասիրութեամբ իւր յարատե աջակցութիւնը չի պիտի խնայէ տեղւոյս ազգային գործերու բարւոքմանը:

Խնամակալութեան անդրանիկ նիստը տեղի պիտի ունենայ յառաջիկայ չորեքշաբթի օրը, 14 Մայիս, ժամը 4 1/2ին յետ միջօրէի, Ազգ. Առաջնորդարանին մէջ:

Խնդրելով որ Ձեր Վսեմութիւնը իր ներկայութեամբ սոյն նիստը արդիւնաւորել հաճի,

Մնամ Ազօթարար

Առաջնորդ Հայոց Եգիպտոսի  
Յովսէփ Եպիսկոպոս

ՊՍՏՃԷՆ ԲՈՂՈՔԱԳԻՐԻՆ

Ադեֆ. 10 Մայիս 1902

Գերապատիւ

Յովսէփ Եպիսկոպոս Այվազեան

Առաջնորդ Հայոց Եգիպտոսի

ԱՍՏ

Գերապատիւ Տէր,

Ստացանք Ձեր Գերապատուութեան 9 Մայիս ամսաթիւ և 136 թը-

ւահամար պաշտօնագիրը, որով կ'իմացունէք մեզ թէ՛ Թաղ. Խորհրդոյ անդամներէն հինգը հրաժարած են և թէ «Համաձայն Կեր. Վարչութեան նախագահ Ս. Պատրիարք Հօր հրահանգին, սոյն Խորհուրդը հիւննապէս յոծուած է:»

Հետեւապէս, այսօր մենք, շուրջաբերեալքս, երկուքս միայն կը մնանք պաշտօնի վրայ անցեալ Մարտ 23ին կատարուած ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆՑ արդեամբ:

Արդ, ինչպէս օրէնքը կ'ըսէ (\*). «Երբ Թաղ. Խորհրդոյ մը մեծագոյն մասը հրաժարի, մինչև հրաժարման թուականն եղած հաշիւն ալ 'ի միասին պարտական է ներկայացնել Վարչութեան. ապա թէ ոչ Առժամանակեայ Խորհուրդ կը կարգուի եւ ՓՈՔՐԱԴՅՈՆ ՄՍՍՆ ԱԼ ՆՈՅՆ ԱՌԺԱՄԱՆԱԿԵԱՅ ԽՈՐՀՈՒԳԻՆ ԱՆԴԱՄ ԵՆ. իսկ եթէ փոքրագոյն մասը ամբաստանութեան ներքև է, ԴԱՐՁԵԱԼ ԱՌԺԱՄԱՆԱԿԵԱՅ ԹԱՂ. ԽՈՐՀՐԴՈՅ ԱՆԴԱՄ ԵՆ, մինչև քննութեան աւարտումը, այսպէս յաւարտ քննութեան ամբաստանութեան և հաշուոյ՝ ՀՐԱՌԺԱՐԵԼՈՅ ՏԵՂ ՆՈՐՈԳ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԿԸԼԼԱՅ:»

«Թաղական Խորհրդոյ մը վրայ ետքէն ընտրութիւն եթէ ըլլայ, մնացելոց ընտրութեան թուականէն սկսեալ 4 տարւոյ տեւողութիւն պիտի ունենայ, եւ ո՛չ թէ նոր ընտրելոց թուականէն»:

Մեծ զարմանք կը պատճառեն մեզ Ձեր Գերապատուութեան յիշեալ պաշտօնագրին մէջ գործածուած հետեւեալ բացատրութիւնները «... Թաղական Խորհուրդը որու Ձեր Ազնուութիւնը եւս կ'անդամակցէր...» որ կը միտին հաստատել թէ մենք, Ո՛Չ - ՀՐԱՌԱՐՈՂ-

(\* ) Տես Սահմանադրական Հրահանգ Թաղական Խորհրդոց. Յօդ. 15:

ՆԵՐՍ, համահաւասար դիրքի մէջ ըլ-  
լանք ՀՐԱԺԱՐՈՂ ՆԵՐՈՒ հետ:

Օրէնքին բացարձակապէս հակա-  
ռակ է այսպիսի ենթադրութիւն մ'իսկ-  
մինչդեռ, Գերապատիւ Տէր, Ձեր,  
Էրբէ Առաջնորդ (1) «պարտաւորութիւնն  
է զաւանդի մէջ Ազգ. Սահմանադրու-  
թեան եւ Կեդր. Վարչութեանն սահ-  
մանեալ օրինաց եւ հրահանգաց ան-  
քերի գործարարութեանը հսկելը»:

Ազգային օրինաց յարգանքը մեր  
վրայ պարտք կը դնէ բուն կերպով բո-  
լորքել ու ե իցէ դիտաւորութեան կամ  
նպատակի դէմ, որ երևան կուգայ Ձեր  
Գերապատուութեան յիշեալ բացատրու-  
թեանէն, զբ ազդաշարութիւն մը կը  
նկատենք ծրագրուած կարգադրու-  
թեան մը, յարեւման նախընթացնե-  
րու, որոյ դէմ ժողովրդային միահա-  
մուռ բողոքներուն հետեանքն եղան  
վերջին ընտրութիւնները:

Կը կրկնեմք ուրեմն, Գերապատիւ  
Տէր, մենք ստորագրեալքս որ օրինա-  
ւորապէս ընտրուած ենք թաղական  
Խորհրդոյ անդամ, Չ'ենք ՀՐԱԺԱՐԱԾ  
և ՉՊԻՏԻ ՀՐԱԺԱՐԻՆԻ. չ'պիտի զոհենք  
Օրէնքին մեզ տուած իրաւունքները,  
ու ե իցէ կամայական կարգադրութեան:

Մեր ստանձնած պաշտօնը ժողո-  
վրդեան կողմէ մեր վրայ դրուած  
Սրբազան պարտաւորութիւն մ'է զոր  
օրինաւորութիւնը կատարէ մեզ յար-  
գել:

Կը խնդրեմք Ձեր Գերապատուու-  
թեանէն լուրջ նկատողութեան առնել  
մեր ներկայ բողոքագիրը, որուն նմանը  
արդէն մատուցած ենք Ազգ. Կեդր.  
Վարչութեան նախագահ Ս. Պատրիարք  
Հօր, և Օրէնքին հաւատարիմ գործա-  
դրութեանը միայն հետամուտ ըլլալ

(1) Տես Սահմանադրական Հրահանգ զառաջ հասար Գյուխ Զ. Յօդ. 2.

Ձեր պաշտօնի հեղինակութեամբը:  
Հաճեցէք ընդունել, Գեր. Տէր,  
մեր խորին յարգանաց հաւաստիքը.

ՀԱՅԿ ԷՔԻՉԼԷՐ Յ. ՄՈՒԹԱՅԵԱՆՑ

Արդ, ի՞նչ կը նշանակէ խնամակալու-  
թիւնը, եթէ ո՛չ կամայականութիւն:

Հրապարակի վրայ կը պտըտցնեն տա-  
կաւին հոչակաւոր հանրագրութիւնը, որ  
10 օրուան մէջ 9 անգամ ձեռքէ ձեռք ան-  
ցաւ, ու մինչեւ հիմայ հազիւ 95 ստորա-  
գրութիւն կարելի եղաւ ժողովել: Ափսո՛ս,  
ափսո՛ս, սա ի՞նչ կաթ է որ կ'ըլլայ վսեմ.  
Պօղոս Բաշային: Նորին վսեմութիւնը, զար-  
գացած ու խոհական անձնաւորութիւն, հա-  
կառակ Իր վայելած հանրային համակրան-  
քին ու յարգանքին, թո՛ղ ներէ մեզի դի-  
տել տալ թէ՛ Ազգային օրինքի ու գործե-  
րու մէջ իր հմտութեան պակասին հետե-  
ւանքովը պատասխանատու կը գտնայ  
ներկայ անախորժ կացութեան հանդէպ, որ,  
անտարակոյս, Ազգային խաղքութիւն, հե-  
ռի է պատիւ բերելէ Տեղիս Հայ Հասարա-  
կութեան որուն զլիուս պատուհաս մը  
զարձաւ սա Առաջնորդ կոչուած ՀԻՒՆԵՐ  
ՄԱՐԴ:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ

ԷՍԹ ՌԷՍԹԻ

Քարից 30 Ապրիլ 1902

ՖՐԱՆՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՄԵՐ  
ՆԿԱՏՄԱՄԲ.

Անցեալ Կիրակի (երկու օր առաջ)  
սեղի ունեցան Ֆրանսական ընտրու-  
թիւնները: Բայց սա դեռ վերջնականը  
չէ, որովհետեւ թեկնածուներէն շատերը  
չի կարողանալով ունենալ պէ՛տեղած  
քուէն, անորո՛ւ վիճակ մը առաջ բերին  
եւ ասոնց ընտրութիւնը մնաց — ինչպէս  
կը պատահի միշտ ամէն ընտրութեանց  
ժամանակ — երկրորդ անգամ քուէա-  
կութեան որ սեղի պիտի ունենայ Մա-  
լիսի երկրորդ Կիրակիէն:

Մինչեւ օրս ընտրածները — Դեռ՝ կլոր բուով՝ հարիւր երեսփոխաններ կան ընտրելի — եթէ ի նկատի առնենք կը տեսնենք, ընդհանուր առմամբ թէ առաջիկայի կամ գալիք սենեակը պատշոնագուրի եղածէն արբերութիւն մը չունի, այսինքն անցեալ արուան սենեակն ինչ արբերել որ բաղկացած էր, գրեթէ նիւզ մի եւ նոյն արբերելէն բաղկացած է կամ պիտի բաղկանայ եւ գալիքը: Անուան մի քանի չընչին արբերութիւններ կան, «օրինակ՝ Բարիգի երեսփոխաններու թուին մէջ նասիօնալիս կուսակցութիւնը մի քանի արբու աւելի շահեցաւ, նոյնը կարելի է ըսել եւ Ֆրանսայի մեծ կեդրոններուն համար:

Մինիստրականներու թիւը յուսացուած քանակութիւնը չարտագրեց, այնպէս որ հալամինիստականներու թիւը Մինիստրականներու թուի կիսէն շատ աւելի է: Ընկերվարական կուսակցութեան ներկայացուցիչներէն շատերը — նոյն իսկ մի քանի պետեր — յաղթուեցան, եւն, եւն:

Բայց ինչպէս ըսինք, ընդհանուր բերմամբ, ի՞նչ որ էր նախկին սենեակը նոյնը պիտի լինի նաեւ գալիքը:

— Ընտրութեանց երկրորդ օրը՝ երկուշաբթի — որովհետեւ ընտրութեանց հետեւանքը յայտնի եղաւ, մեծաւ մասամբ կիրակէ երեկոյ 8 1/2 էն մինչեւ առաւօտեան ժամը 1 1/2 ը — մի քանի հայեր վազելով եկան մեր գործակալութենէ տեղեկութիւններ առնելու եւ մանաւանդ հեկեկալու որ ընտրութիւններն այնքան զէտ հետեւանք ունեցան, այսինքն ընկերվարականները, ազատամիտները, առաջդիմականները, մարդասէրները, եւն, եւն, չընտրուեցան...:

Անուան եթէ ընտրածները մեր Հայերուս ուզած մարդիկը լինէին, շատ լաւ բան կը լինէր, այն աստիճանով մենք աւելի համակրութիւն գրտնէինք Ֆրանսական կառավարութեան

ի սով, մեր... պիտուն աչեւուն համար, անուան ցաւալի է որ մեր դատին երկու ախոյեանները՝ Բոլ Տը Գաւանեալ եւ Էտուար Տրիման դուրսն ինկան, որոց առաջինը՝ թէպէտ թունգ Կայտեալան՝ միտ եւ միտ լաւ գրած մեր մասին իւր «*Autorite*» թերթին մէջ եւ սենեկին մէջ միտ պատշոնալ կանգած է Հայերու, ամէն անգամ որ խօսք բացուած է մեր մասին: Երկրորդը՝ Եդուար Տրիման՝ կասալի հակասեմական եւ հիմնադիր հակասեմականութեան. իւր «*La Libre-Parole*» թերթին մէջ հարիւրաւոր անգամներ՝ մեզ ի նպաստ՝ գեղեցիկ յօդուածներ գրած է. Տրիման Բարիգի յայտնի խմբագրութեան մէջէն, Հայոց մասին ամենէն շատ գրողն եղած է: Իրաւ է թէ Բարիգի մէջ հանդիպեցանք մի քանի սիրացու Հայերու որոնք Տրիմանը կ'ասէին իբր աղանդապետ՝ հակասեմական, եւ աւելի կը նախադասէին որ նա տղ մ'իսկ չգրէ մեզ համար...: Բայց սեն՝ ի՞նչպէս չի ցաւինք այդ մարդուն իյն սլուն վրայ, որ առաջինն եղաւ Ֆրանսական մամուլին մէջ, Հայոց ի նպաստ ձայն բարձրացնելու, բողոքելու, հասարակաց կարծիքն ցնցելու... մինչ Բարիգեան մամուլի մեծագոյն մասը — բաղկացած հրեայներէ — կատառուած թուրք դեսպանատնէն կամ բոլորովին լուռ կը կենար եւ կամ ամեն պատշախտատուութիւն նահատակ Հայերուն վրայ կը դնէր:

Եւ չէ՞ որ ըսուած է թէ «չունք իյնողը օտին կը փարթորի», բնական էր թէ մեր նգնածամին մէջ ով որ առաջին անգամ մեզ ձեռք կարկառեց, մեր համակրութիւնը, մեր երախտագիտութիւնը իրեն գրտեց: Ասկէ գտ, մենք Հայերու, բուն ազգային տեսակէտով երբ մտածելու որ լինինք — նոյնիսկ եթէ տգորուած լինինք համամարդկային եւ մարդասիրական ամենավեհ եւ ամենարնդարձակ գաղափարներով —

միթէ կրնա՞նք, խղճի մտօք, մեծ համա-  
կրօսքին մ'ունե՞ալ այն ցեղին (Հրեայ)  
համար որ այնքան usur վարմունք մ'ու-  
նեցաւ Կ. Պօլիս Հայերու բնակած տու-  
ները բարբարոս խուժանին ցոյց տա-  
լով...:

ՄԵԼԻՔ Ս. ԴԱԻԻԹԲԵԿ

### ՊԱՐՍԿԱՀԱՅԻ

Սաւրայ գիւղն ունի մի քարաշէն հին  
եկեղեցի եւ մի պարզ նախակրթարան, ու-  
րոց ծախքերը մեծաւ մասամբ վճարում է  
Տիկին Թագուհին: Այս գիւղն էլ ունի եր-  
կու ծերունի եւ մտային ողորմելի կարո-  
ղութեան տէր քահանաներ. զանազանու-  
թիւնն այն է, որ սոքա աւելի սիրով են  
վարում միմեանց հետ, քան միւս գիւղե-  
րի քահանայք, եւ ինչպէս կարծւում է,  
Ռոստովից լիարուն ժամոցներ են ընդու-  
նում պ. Տովլաթ Յօմանեանցէն, մանա-  
ւանդ թէ հարուստ հողերի եւ այգիների  
տէրեր էլ են սոքա:

Սաւրայ գիւղը՝ մի քանի տարի առաջ  
Պարսկական կառավարութեան էր պատկա-  
նում, որի հետ եւ մի քանի գիւղերը արը-  
ուել էին Թաւրէզ նստող զահաժառանգին  
որպէս ապրուստի լաշնութիւն տուող մի-  
ջոցներէ. երբ ներկայ Շահը գեռ Թաւրի-  
զում «Վալի Ահա»ի պաշտօնն էր վարում,  
եւ որն մի տարեկան հասոյթի գնով ծա-  
խել էր իւր սեղանաւոր Թաւրիզեցի հա-  
րուստ պարսիկ «Մաշադ Թալի»ին: Վերջինս  
այնքան ծանր ու խստագոյն տուրքեր պա-  
հանջեց գիւղացիներէց, որպիսի անսովոր  
պահանջներէց, ձանձրանալով պարսիկ (\*)  
ու հայ բնակիչները՝ մեծագումար ծախսե-  
րով զանազան վայրերը բողոքի ձեւով գե-  
մուններ արին, մինչեւ անգամ ներկայ բա-  
րեխիդ Շահը երկիցս հեռագրաւ խոստա-

(\*) Պարսիկ ուայրներն աւելի զըր-  
կաններէն եւ եկարկիւրս քան հայերը. ու-  
րոնք ոչ ուսեմեմ պաշտպանութիւն չու-  
նեկալով՝ խիստ փափաքաւոք սպառում եւ  
ոռուսաց երկրի գրաւմունք: Մի խուրք պար-  
սիկ կիներ մեզ ոռուս կարծեալ՝ ասում ե-  
ին. «հօր եք ետանում, եկե՛ք սիրեցե՛ք մեզ»:  
Ծ. Յ.

ցաւ գիւղը գիւղացիներին յանձնել: Գիւ-  
ղացիները՝ որոնք Մաւադ թաղիի գնած  
գումարի կրկինը տալու ու գիւղը Շահի  
կառավարութեան նուիրելուն համար յօժա-  
րութիւն ունէին, եւ ինչպէս լսում էինք,  
Յունանեանք խոստացել էին Ռոստովից  
ուղարկել տեղի ունեցած ծախքերի գու-  
մարը, բայց եւ այնպէս ցայսօր գիւղացիք  
կը հեծեն յիշեալ գիւղատէրի կամայական  
իշխանութեան ներքեւ: Ատրպատականի  
Հայոց Առաջնորդարանի միջամտութիւնն  
էլ ի դերեւ ելաւ սոյն ինդրում, շնորհիւ  
գիւղատէր համարուած անձի զօրաւոր  
պաշտպաններուն: Գանի՛ քանի անգամ այր  
մարդկանց չղթայակապ էՅօյ ու Թաւրէզ  
տարան, բռնութեամբ ստորադրութիւններ  
առին, պարսկախառն հայ կանայք դատաւորի  
զուռը գիմեցին՝ իրենք զիրենք այրելու  
սպառնալիքներով, գիւղատիրջ գիւղում  
խոնող ծառաներին ու նոցա հետ պարսիկ  
սարբաղներին (զօրք) քարերով ու փայտե-  
րով հալածեցին զիւղից, այնու ամենայնիւ  
օգուտ չը կտրացին գտնել: Ինչպէս կար-  
ծում եմ, 300 թումանի մի աննշան գու-  
մարով ձեռք բերած էր Մաւադ թաղին այս  
300 անից աւելի բնակութիւն եւ զիրենք  
կառավարելու պիտոյքներից աւելի վարե-  
լահողեր, այգիներ ու անտառներ ունեցող  
գիւղը:

Ինչպէս վերելում յիշածս գիւղերում,  
նոյնպէս եւ Սալմաստի բոլոր գիւղացիներ-  
ը, կանայքը հագնում են գրեթէ միատե-  
սակ հագուստներ, պարզ ու բաւական կո-  
կիկ ձեւերով: Այգիներում, անտառներում,  
ջրեղէրքներում եւ ամեն տեղ՝ ուր կանաչ  
խոտեր ու հովանիներ են լինում, ամէն  
օր ձաշից վերջ (ամառները) լիքն են երկ-  
սեւ բազմութեամբ, մանուսանդ կիւրակէ  
օրերում: Մի տեղ թէյ են դրել, ուրիշ տեղ  
օղի - գինի են խմում, այս տեղ պար են  
խաղում հարս եւ աղջիկներ, այն տեղ  
փող, զուռնայ, դօլ, քամանչայ եւ ջութակ  
են անում:

Տարուան մի քանի նշանակուած առ-  
ներում Հաւթվանի Ս. Թաղէոսի եւ հին  
քաղաքի Ս. Յովհաննու մատուռներ ուխտի  
են գնում խուռն բազմութեամբ, որ տեղեր  
ամէն անգամին (խիստ քիչ պատահում են  
բացառութիւններ) արիւնահեղ պատերազմ-  
ներ ու մինչեւ իսկ մարդասպանութիւններ  
են տեղի ունենում, երբ քահանան մատու-  
ռում անտարբեր Պատարագ է մատուցա-

նում, ու այնքան ժողովրդեան այն տեղերը հրաւիրելու պատճառն է դառնում, մի քանի զան փող ընդունելու համար: Այլ եւս ժողովրդեան տարած մատազն էլ է խանդարվում, ու բախութիւնը տրամութեան փոխուելով:

Իսլամային գործերում խիստ ազատ է Սալմաստի իպահան սեռը, շատ հազուադէպ են լինում անտեղութիւններ այսպիսի երթեւեկութեանց միջոցներում, մանաւանդ այգիների արդիւնաբերութեանց ժամանակամիջոցներում զուտ ու դուրս վիտում են խայտաճամուկ հարսների եւ աղջիկների բազմութիւնը:

Երբ ճանապարհորդ առաջին անգամ գոլով՝ Տաճկաստանի սարերից շրջուելով հասնում է «Գէրիկ»ի անուանի Վանուց ստորոտները կամ հին քաղաքի բարձունքները, Սալմաստ գաւառը իւր ամբողջութեամբ մի բնդարձակ դրախտի նմանութեամբ արեւմուտքէն դէպ արեւելքը պարզվում է իւր աչքերի առջեւ, իսկ Զօլա գետը ձիւղ կեղրոնէն վիշապի նման պտոյտներ անելով եւ զանազան օճաւոր ձիւղեր բաժանելով իւր հսկայ իրանից՝ առաջանում է արագաբար դէպի աղի ծովակը, որի եզերքները նստել են բազմաթիւ ոչխարների հօտերը, կամ միջում լող են տալիս ամենի գոմէշները: Կովերի նախիրները կշտապինդ կերած ու Զօլայի քաղցրահամ ջրից խմած՝ մակաղել են քիչ նեղու գեւտեղրից՝ որոճում են ու որոճում. իսկ հովիւներ ու նախորդները իրենց հովուական սրինգն առած պզգիւլ են մի բարձր ու սրածայր քարաժայռի գլխին՝ իրենց յատուկ եղած սրտագրաւ եղանակով եղերբերկեր են զլում: Երկրագործ պարսիկներ ու պարսուհիները անդադրում զեռունների նման եւ են գալիս. առաջիններն իրենց մորթեայ խոշոր փափախներով, տեղական պարզ կտաւից կապուտ հագուստներով փորում, ցանում, անկում ու խլում են. ոմանք էլ երկիւղած ջերմեռանդութեամբ կուղ ու պարզ են անում ջրերի եզերքներում. իսկ վերջինները՝ իրենց կոռունկի նմանութեամբ մերկ սրունքներով դաշտերում ման են գալիս, տաւարների չորացած աղբերն են հաւաքում, ոմամք իրենց մարդերին կէսօրեայ ճաշն են տանում կամ

արտերում քահանքրով են զբաղվում: Ամէն տեղ, ամէն քայլափոխին կենդանութիւն եւ աշխատութիւններ են տեսնվում: Անցնում եւ Պարսկական կեղտոտ փողոցներից, ահա հասնում եւ մի այլ տարագաղգեստ բազմութեան, որոց պարապմունքներից յայտնի լինում է թէ սոքա հայեր են, որոնք ձիւրով եւ էշերով բեռնաւորած՝ այգիներից կամ արտերից տուններն են վերադառնում, խոտի կամ ցախի խուրճերով, կանայք, աղջկունք ու երախաներն էլ «հրահրուելով», ուրախ-զուարթ հանաքներ անելով եւ մերթ անցորդներին մուսիկ հանելով կամ ջերմազին հայհոյանքներ ուղղելով (եթէ անցորդներն անքաղաքավարի կամ անվայել մի ընթացքով անցկեան քովերից առանց սիրալիւր բարեւներ ընծայելու) հարա՛յ ու հրոց, Պարսկական «ըսքեալտա» եղանակներով զիւղիւ, կլկըլալի ու զղզղուն ձայներով անցորդների ականջն են խլացնում, եթէ սոցա ազմուկների վերայ աւելցնենք նաեւ բազմաթիւ էշերի (\*) զուգոցները:

Ինչպէս ասացինք, Սալմաստեցիները վերջին քսան տարիների ընթացքում խիստ շատ փոխուել են ազգայնական զգացումների եւ հիւրասիրական օրինակելի տեսակէտով: Ամէն հայ պատահողաց, լինին սոքա հարուստ թէ աղքատ, Սալմաստեցին իւր տան դռները բաց է թողնում առջեւները, քանի ուղում են, թող միան նոցա տներում. հիւրերի առջեւ բաց են նաեւ ամէն ապրուստի միջոցները, որով շատ անգամ աներեսները փորձանք են դառնում տան տէրերի գլխներին:

Մօտից ծանօթ գոլով Սալմաստեցուց գովելի ու պախարակելի կողմերուն դրում եմ: Անուրանալի մի ճշմարտութիւն է, որ Սալմաստի հայոց նման ոչ մի աշխարհում տյնքան խնամքով ու զուրգուբանքներով չը վերաբերուեցան դէպի վշտալի եւ կարօտ հայ զաղթականները: Սալմաստի հայ տուններն ապաստանող բազմաթիւ հայ փախստականները՝ ինչպէս իրենց խակական աներում ապրելու նման կեանք վարեցին 5-6 տարիներու չափ: Որպիսի բազմազան երկիրներից խանդ բազմութեան մէջ գրոնուեցան նաեւ ապերախտները, որոնք ի-

(\*) Պարսկաստանում, մանաւանդ Թաւրիզում, Էշերի քաղնութիւնն արգիլում է մարդոց ազատ անց ու դարձը:

րենց շնորհուած վատահոլութիւնը չարաչար գործածեցին, այնու ամենայնիւ, Սալմաստեցի հայը չը վհատեցաւ, խիստ շատ ներողամտութեամբ վարուեցաւ համարիւն եղբայրների ու քոյրերի հետ, բաւ համարելով նոցա արդէն ստացած վէրքերն ու հալածանքները: Որքան տղեղ երեւոյթներու էլ հանդիպեցաւ նա, բայց շատ անգամ տեսնել ու լսել չուզեց կամ աւելի ճիշդն ասած, վեհանձնութեամբ վարուեցաւ իւր կողմի տակ եղող հիւր հայերի հետ: Թողնենք գաղթական չքաւոր հայերի խիստ քիչերի գործած յանցանքները, ինչպիսի պակասութիւնները շատ անգամ պատահել են կամքից անկախ պարագաներից ստիպեալ, սակայն ներելի է նաև մի կարգ ինտելիգէնտ (\* ) համարուած անձնուէրներին. որպիսեաց կրթման «ազգասէր, ազգային» էին անուանուած տեղացիք, իսկ ա՛յժմ, — «ազգակեր», որոնցից ոմանք հրացանի ուժով պահանջուած էին եւ համեստ կանանցից՝ պասիւր: Օ՛հ, հայ սիրտ ունեցող անձնաւորութեանց կիրքերն են զբաււում . . . մանաւանդ նոքա, որոնք այս տեսակ դէպքերն էլ կուսակցական բուռն կիրքերէն մղեալ լրացրական հրապարակի վերայ գրելն. ոմանք էլ յետին մտքերով իրենց ուզած գոյնն ու ներկերը տալով պատահարներին: Գայթակղութիւնները պատահուած են ամէն կարգի ակումբներում, ինչպէս ասում է հայրենի առածը «մի ցոան կովը նախրի անուռն է քցում», այսպէս էլ վերջին տարիներում մի քանի երես առածները Սալմաստում անկարգութիւններ գործեցին, սակայն անաչառ լինելու ենք ճշմարտութեան առջեւը, որ կատարուած գայթակղութիւնները ինքնաճանաչ անձանց թելադրութեամբ տեղի ունեցած չէին: Այս տղերք գրողը՝ խիստ արժանահաւատ անձինքներէ լսել ու տեղեկացել է, որ յանցաւորների վերայ ամենախստագոյն պատիժը (մահ) գործադրուել է. մանաւանդ նոցա վերայ, որոնք յանդգնել էին ժողովրդեան հանգստութիւնը խանգարել, ոմանց պատիւներին հետամուտ լինելով:

(\* ) Յեղափոխական անուան սակ ծածկուող քագուն գայի՛րը, որպիսիք ամենայն ինչ գործում ու յաչս ժողովրդի անվեղ եւ հանդիսանում. իրանց ճարպիկ շեղում ու գրչով, ուրիշների լուս ուղիքի տեղ ընթանելու վարպետ որդիները շինելով:

(Շարունակելի) Ն—ԵՐ

Նիւթերուն առասուրբինը մեզ սխալեց յաջորդին յետաձգել ԱԶԳ. ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԻՆ ՇՈՒՐՁԸ յողուածը: Յաջորդ թիւով կարդայ Տեղական հարցին վրայ կարեւոր յայտնութիւններ բերող յողուած մը:

**Ք Ր Ո Ն Ի Կ**

Ա Ա Ա Ա Ա Ա Ա Ա

— ՀԱՅ ՆՈՒՍ.Գ.Ս.ԾՈՒՍ.Ց ԽՄԲԻՆ Ի նպաստ գանազան նուիրասումսեր քրջաբերութեան մէջ են: Տեղիս գեղարուեստաւէր հասարակութիւնը կը հրաւիրուի փաշալեթել այդ ընտիր խմբին այս ձեռնարկը. որուն արդիւնքի պիտի ծառայէ իրենց համազգեսներ պատաստելու: Ի՞նչ ընէին, ուրիշ միջոց մը չ՛գտան այդ համակերպի խմբին վարչութեան անդամներ: Փրօնիկի ընթերցողները կը յիշեն անուրես այդ մասին ֆանիցս եղած փայլուն խոսումները:

Քաշալեթե՛նք Հայ Նուագածուաց Խումբը:

— Ա.Ղ.Բ. ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՄԱՏԵՆԱ.Գ.Ս.ՐԱՆ—ԼՍՍ.ՐԱՆ 2 դուրեւոց նուիրասումներ հանած է հրապարակ:

Ընթերցաւէր Ազգայինները պարտին ջանալ որ առաջ սպառել սալ այդ նուիրասումները, որպէս զի սոյն ազգոգոս հասասուրբինը շարունակէ բաւելի տեղիս հասարակութեան մատուցական սնունդն ու լոյսը:

— ԿԱՐՄԻՐ ՎԱՐԴԱՆ Թասրերգութեան ներկայացումը տեղի ունեցաւ Կիրակի գիշեր ժամը 9 1/2 ին եւ տեւեց մինչեւ 2, Բիրամիս Թասրոնին մէջ ի ներկայութեան բազմութեան մը, որ եկած խոնած էր հոն: Կր ցալինք ըսել թէ՛ Դերասանական խմբին մէջ չը գրեսանք գնահատելի դերակատար մը:

Միայն ԱՅՐԻ ՏԻԿԻՆ ՄԱՌԻ Ե. ՊԷՆԼԵՍՆ քաւական յաջողութեամբ կատարեց Շոշանիկի դերը: Թէ՛ քատարախաղին եւ թէ՛ ներկայացման վրայ մեր տեսութիւնները յաջորդով:

կը կատարէ մեծ խնամով եւ,  
ինչ որ նուազ կարեւոր չէ,  
ԽԻՍՏ ՉԱՓՍԻՈՐ ԳԻՆԵՐՈՎ:

**ԿԱՐԵՆՈՐ ԱԶԴ**

Եզիպտոսի կառավարութեան ու պե-  
տական կարեւոր անձնաւորութեանց եւ  
նոյն խի մասնագէտներու կողմէն գնա-  
հատուած Եզիպտոսի Քարսէսը, որուն վրայ  
ժամանակին ա՛յնքան գովեստներով խօսե-  
ցաւ ՓԱՐՈՍը եւ զոր պատրաստած է մեր  
համակրելի երկրաչափներէն ՏԻԱՐ ՌԱՅԱ-  
ՅԷԼ, ՆՇԱՆՆԱՆ, մինչև ցարդ պատրաս-  
տուած քարտէսները կը գերազանցէ:

Այդ յարգի ու ընտիր քարտէսէն ու-  
նենալ փափազողները կրնան դիմել ՏԻԱՐ  
ՀՈՎԵԼ ԿԱՐԻՆԵԱՆԻ քով, Փիւնիկի խմբադ-  
րատունը կամ Արաբի տպարանը:  
Գինն է 25 դրուշ ողջ:

**ՀԱՅ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐՈՒՆ**

Սուրիացի հայ երիտասարդ մը, sui-  
rիներէ ի վեր Եգիպտոս հաստատուած,  
Երուսաղիմի քանի մը լեզուներու հմուտ,  
ու քաջ արարագէտ միանգամայն, պատ-  
րաս է վաճառականաց արաբերէն  
թղթակցութիւնները կատարել զոհացու-  
ցիչ պայմաններով:

Մանրամասնութեանց համար դի-  
մել հմբագրատուն կամ «ԱՐԱՔՍ» ի  
սպարանը:

**«ԱՐԱՔՍ»**

Հայկական տպարանը թէ՛  
Հայերէն, թէ՛ գաղղյիերէն եւ  
թէ՛ ուրիշ լեզուներով ամեն  
տեսակ տպագրական գործեր

**SALAMANDER**

**ՍԱԼԱՄԱՆՏԵՐ**

Ապահովագրական Ընկերութիւն  
ընդդէմ հրդեհի.

ԱՐՄԹԵՐՏԱՄ

Դրամագլուխ 3,125,000 ֆրանկ

Ամեն կերպ Ապահովագրութիւնը կ'ընդունուին ընդդէմ հրդեհի ինչպէս  
նաև Ծովային, Դետային եւ Ցամաքային փոխադրութեանց արկածներու դէմ.

Դիւրամատչելի գներ եւ պայմաններ

Դիմել առ Ընդհանուր Գործակալ եւ Լիպգոր-Փոխանորդ

ՄԻՀՐԱՆ ԳԱԼՃԱՆԱՆ

Աղեփասանդիա, պզտիկ Մէնչիե Ապուսարսա փողոց թիւ 10

**L'ALLIANCE**

**Լ'ԱԼԻԱՆՍ**

Ծովային Ապահովագրական Ըն-  
կերութիւն.

ՊԵՐՍԻՆ

Դրամագլուխ 5,000,000 ֆրանկ